2022

ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ

ՀՀ ք. Երևան Ավան վարչական շրջան, Հ. Աճառյան հ. 53 և հ. 53/1

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ /լրամշակված/

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ.բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com

ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ

ՀՀ ք. Երևան Ավան վարչական շրջան, Հ. Աճառյան հ. 53 և հ. 53/1

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

/լրամշակված/

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ տնօրեն՝ Է. Մարգարյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5
1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն 5
1.3 Հապավումներ 5
1.4 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը 6
1.5 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը 7
1.6 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) 10
1.6.1 *Ներկա վիճակի նկարագիր* 10
1.6.2 *Նախատեսվող գործունեության նկարագիր* 12
1.6.3 *Իրավիճակային հատակագիծ* 16
1.6.4 *Գլխավոր հատակագիծ* 19
1.6.5 *Մոտակա հուշարձաններ և դրանց պահպանման գոտիներ* 20
2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ 21
2.1 Աշխատանքների կատարման սխեմա 22
Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են 25
2.2 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը 25
2.3 Ժամանակավոր շինություններ 26
2.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները 26
2.4.1 *Նյութերի և բնառեսուրսների օգտագործում* 27
2.5 Ջրամատակարարում և ջրահեռացում 27
2.6 *Ընդհանուր օդափոխության համակարգեր* 29
2.7 Էներգախնայողության միջոցառումներ 30
2.8 *Էլ. մատակարարում* 31
2.9 *Գազամատակարարում* 31
2.10 *Կանաչապատման աշխատանքներ* 31
2.11 *Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ* 32
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ 33
3.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները 33
3.2 Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը 34
3.3 Կլիման 34
3.4 Օդային ավազան 39
3.5 Ջրային ռեսուրսներ 43
3.6 Հողերի նկարագիրը 43
3.7 Հողային ռեսուրսներ 43
3.8 Բուսական աշխարհ 44
3.9 Կենդանական աշխարհ 44
3.10 Թափոնների կառավարում 45
3.11 Ավան վարչական շրջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ46
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 59
4.1 Ռիսկերի գնահատում 59
4.2 Արտանետումների աղբյուրները 60
4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն 60
4.3.1 *Մթնոլորտային օդ* 60
4.3.2 *Ջրային ռեսուրսներ* 60

4.3.3 *Հողային ռեսուրսներ* 61
4.3.4 *Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը* 62
4.3.5 *Հակահրդեհային միջոցառումներ* 63
4.3.6 *Աղմուկ և թրթռում* 63
4.3.7 *Թափոնների կառավարում* 64
4.3.8 *Տարածքի բարեկարգում կանաչապատում* 64
5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ 65
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 66
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ 69
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 71
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 72

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	**«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ**
1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	**ՀՀ ք. Երևան Շիրակի փող. 74/16**
1.5 Նախատեսվող գործունեության հասցեն՝	**ՀՀ ք. Երևան Ավան վարչական շրջան, Հ. Աճառյան հ. 53 և հ. 53/1**
1.6 Հեռախոս՝	**+37499994222**

1.3 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.4 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է իրականացնել բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքներ: Նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան, Ավան վարչական շրջան, Հ. Աճառյան հ. 53 և հ. 53/1 հասցեներում:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան[1]:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող

[1] ՀՀՇՆ 30-01-2014 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ
ՀՀՇՆ 31-01-2014 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ. ՄԱՍ1 .ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ
ՀՀՇՆ 21-01-2014 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ
ՀՀՇՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021Թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ

գործունեության նախնական գնահատման փուլում Երևան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

1.5 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Երևան քաղաքի Ավան վարչական շրջան, Հ. Աճառյան հ. 53 և հ. 53/1 հասցեներում հասցեներում բնակելի համալիրի կառուցում աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը

հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղեկատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք /ընդունված 23.11.1999 թ./, որը սահմանում է պետական քաղաքանությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում,

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք /ընդունված 03.04.2000թ./, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների Հայաստանի Հանրապետությունում պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքանությունը,

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը /27.11.2006թ./, որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները,

ՀՀ կառավարության 29.01.2010թ.–ի N 71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,

ՀՀ կառավարության29.01.2010թ.–ի N 72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի,

ՀՀ կառավարության 22.02.2018թ.–ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշում,

ՀՀ կառավարության 31.07.2014թ.–ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» 1S1781-Ն որոշում,

ՀՀ կառավարության 27.05.2015թ.–ի Ա764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը,

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

«Ջրային օրենսգիրք»–ը /04.06.2002թ./

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.6 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.6.1 *Ներկա վիճակի նկարագիր*

Քննարկվող հողատարածքները գտնվում են ՀՀ, ք. Երևան, Ավան վարչական շրջան, Հ. Աճառյան հ. 53 և հ. 53/1 հասցեներում, որոնց գումարային մակերեսը կազմում է 120040.5 մ^2: Հողատարածքի դիրքային ուղղվածությունը Հյուսիս-արևելյան է և դեպի Հ. Աճառյան փողոց ունի շուրջ 280 մ լայնությամբ ճակատ: Քննարկվող հողատարածքն Աճառյան փողոցին հարող ճակատի ողջ երկայնքով ունի խիստ ռելյեֆ, որը մեղմանում է հողատարածքի խորքային հատվածներում: Հողատարածքում առկա է չգործող էլ. ենթակայան, իրենից ներկայացնում է կիսաքանդ շինություն, որը ենթակա է ապամոնտաժման: Կառուցապատման համար նպաստավոր հիմնահողային շերտերը մոտ 14 մետր խորության վրա են:

Ճանապարհային իրավիճակ և մոտեցումներ

Հողատարածքի հյուսիս-արևելյան ճակատի ողջ երկայնքով ձգվում է Հ. Աճառյան փողոցը, որն էլ իր հերթին կապում է Երևան-Սևան մայրուղին Մյասնիկյան պողոտայի հետ: Հողատարածքը ներկայումս ունի նաև դեպի հարևանությամբ գտնվող Ֆուտբոլի ակադեմիա ընկած հատվածում այլընտրանքային ելքային ճանապարհ: Այս այլընտրանքային ելքային ճանապարհը նախատեսված է երևանի գլխավոր հատակագծով, սակայն ներկայումս այդ ճանապարհն ասֆալտապատ չէ և ունի հիմնահողային ծածկույթ:

Վերոնշյալ հիմնահողային ճանապարհը չի խոչընդոտում որևէ գույքային սեփականություն և ամբողջությամբ գտնվում է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքներում:

Մոտակա հուշարձաններ և պահպանման գոտիներ

Քանի որ հողատարածքը, գտնվելով Ավան վարչական շրջանում, մոտ է նաև Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանին, ապա դիտարկված են թե Ավան, թե Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններում գտնվող մոտակա հուշարձանները և դրանց պահպանման գոտիները: Քննարկվող հողատարածքին առավելագույնս մոտ գտնվող գրանցված հուշարձանը Քանաքեռի զորանոցային համալիրն է, որը գտնվում է 690 մ հեռավորության վրա («հատված 18», մակերես՝ 35744): Մյուս հուշարձաններն ունեն հետևյալ տվյալները՝ թիվ 16 պոլիկլինիկա և Ա. Տեր-ղևոնդյանի անվան երաժշտական դպրոց («հատված 17», մակերես՝ 7019, հողատարածքից հեռավորությունը՝ 1070 մ), «հատված 23»-ի ներքո տեղակայված են հետևյալ հուշարձանները՝ բնակատեղի, դարպաս, հավիտենական կյանքի հուշարձան, բնակելի տուն, Գևորգյանի բնակելի տուն, Ավանի կենտրոնական գերեզմանոց, եկեղեցական համալիր, Ս. Աստվածածին եկեղեցի, Ս. Հովհաննես եկեղեցի, Ավանի եկեղեցական համալիր, Ս. Աստվածածին /կաթողիկե/ ծիրանավոր (մակերես՝ 595989, հողատարածքից հեռավորությունը՝ 1080 մ):

ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1. Կադաստրային ծածկագիրը՝ 01-002-0214-0444, 01-002-0214-0445
- Մակերեսի չափը (հա)՝ 9.81136, 0.31595
- Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման, Խառը կառուցապատման
- Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2. Կադաստրային ծածկագիրը՝ 01-002-0214-0452
- Մակերեսի չափը (հա)՝ 1.87674
- Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման, Խառը կառուցապատման
- Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տեղ-տեղ հանդիպող հողային ծածկույթի վրա, որտեղ բուսահողի հզորությունը 10-20սմ է, տարածված է կիսաանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն, մասնավորապես՝ Սեզ սողացող (E. repens), Սեզ սանրանմանը (E. cristatum), Սեզ մազակիրը (E. trichophora), Սեզ միջինը (E. intermedia), Սեզ երկարավունը (E. elongatum): Ամբողջ հողամասում բուսահողի ծավալը գնահատվել է մոտ 7800մ^3:

1.6.2 *Նախատեսվող գործունեության նկարագիր*

<u>Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր</u>

Ք. Երևան, Ավան վարչական շրջան, հ. Աճառյան 53 եվ 53/1 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագիծը մշակված է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 16092022-01-0240, N 14102022-01-0193 վկայականների եվ 25.07.2022 թվականին տրված N 01/18-07/2-Դ-91047-1023 ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայն:

Հողատարածքում նախատեսվում է պարագծային, շղթայական և կետային կառուցապատում: Ընդհանուր կառուցապատումը նախատեսվում է իրականացնել արևելքից-արևմուտք՝ հարկերի աճման սկզբունքով (5 - 22 հարկ):
Կառուցապատումը նախատեսվում է փուլային և բաղկացած է թվով 4 փուլից:

Փուլ 1
Առաջին փուլի կառուցապատումը նախատեսվում է իրականացնել 15, 16, 21 և 22 հարկ հարկայնությամբ բազմաբնակարան բնակելի շենքերով: Բոլոր շենքերի առաջին հարկերը առևտրահասարակական նշանակության են և հասարակական նշանակության տարածքներում նախատեսվում են նաև մասնավոր կրթական հաստատություններ: Առաջին փուլում կառուցապատման արդյունքում առաջացող ներքին բակում նախատեսվում է տեղակայել թենիսի կորտ, բասկետբոլի դաշտ, բակային մարզասարքեր, զրուցարան, մանկական խաղահրապարակ, ջրավազան և կանաչապատ տարածքներ: Առաջին փուլով նախատեսվող բոլոր շենքերը ստորգետնյա հատվածում միացված են ընդհանուր ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղիով: Ստորգետնյա հատվածում նախատեսվում է նաև տեղակայել առաջին փուլին սպասարկող պոմպակայաններ և էլ. ենթակայան:

Փուլ 2
Երկրորդ փուլի կառուցապատումը նախատեսվում է իրականացնել 15, 16, 21 և 22 հարկ հարկայնությամբ բազմաբնակարան բնակելի շենքերով: Բոլոր շենքերի առաջին հարկերը առևտրահասարակական նշանակության են և հասարակական նշանակության տարածքներում նախատեսվում են նաև մասնավոր կրթական հաստատություններ: Երկրորդ փուլում կառուցապատման արդյունքում առաջացող ներքին բակում նախատեսվում է տեղակայել թենիսի կորտ, բասկետբոլի դաշտ, բակային մարզասարքեր, զրուցարան, մանկական խաղահրապարակ, ջրավազան և կանաչապատ տարածքներ: Երկրորդ փուլով նախատեսվող բոլոր շենքերը ստորգետնյա հատվածում միացված են ընդհանուր ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղիով: Ատորգետնյա հատվածում նախատեսվում է նաև տեղակայել երկրորդ փուլին սպասարկող պոմպակայաններ և էլ. ենթակայան:

Փուլ 3
Երրորդ փուլի կառուցապատումը նախատեսվում է իրականացնել 15, 16, 21 և 22 հարկ հարկայնությամբ բազմաբնակարան բնակելի շենքերով: բոլոր շենքերի առաջին հարկերը առևտրահասարակական նշանակության են և հասարակական նշանակության տարածքներում նախատեսվում են նաև մասնավոր կրթական հաստատություններ: Երրորդ փուլում կառուցապատման արդյունքում առաջացող ներքին բակում նախատեսվում է

տեղակայել ֆուտբոլի դաշտ, բասկետբոլի դաշտ, բակային մարզասարքեր, զրուցարան, մանկական խաղահրապարակ, ջրավազան և կանաչապատ տարածքներ: Երրորդ փուլով նախատեսվող բոլոր շենքերը ստորգետնյա հատվածում միացված են ընդհանուր ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղիով: ստորգետնյա հատվածում նախատեսվում է նաև տեղակայել երրորդ փուլին սպասարկող պոմպակայաններ և էլ. ենթակայան:

Փուլ 4
Չորրորդ փուլում նախատեսվում է հասարակական կառուցապատում, որն իր մեջ ներառում է քառահարկ սպորտային համալիր և Հ. Աճառյան փողոցի ճակատային երկայնքով ձգվող շղթայական կառուցապատման սկզբունքով հասարակական կառուցապատում: Վերջինիս հարկայնությունը, ռելյեֆային առանձնահատկություններից ելնելով, Աճառյան փողոցի կողմից 5 հարկ է, իսկ բակային հատվածից՝ 9 հարկ (ընդհանուր հարկերի քանակը կազմում է 14 հարկ):

Հրշեջ մեքենաների մոտեցում և անվտանգության գոտիներ
Կառուցապատման սխեման մշակված է այնպես, որ կառուցապատման ենթակա բոլոր շենքերի ճակատներն ունենան հրշեջ փրկարարական ծառայության մեքենայի մոտեցման հնարավորություն ԱԻՆ պահանջներին և նորմերին համապատասխան:

Ծանոթություն

120040.5 մ² հողատարածքը բաղկացած է թվով 2 հողատարածքներից, համապատասխանաբար հետևյալ մակերեսներով՝ Հ. Աճառյան 53 - 101 273.1 մ², իսկ Հ. Աճառյան 53/1 -18 767.4 մ²:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ՝

- Բնակելի շենք՝ 25 հատ
- Սպորտկոմպլեքս՝ 1 հատ
- Հասարակական շենք՝ 1 հատ
- Կառուցապատման մակերես՝ 39000
- Կանաչապատման մակերես՝ 48136
- Բարեկարգման մակերես /ճանապարհներ, սալվածքներ/՝ 32904.5
- Բնակարաններ՝ 4700 հատ
- Ստորգետնյա ավտոկայանատեղի՝ 3500 հատ

Կառուցապատման ենթակա ամբողջ համալիրում բնակելի շենքերի դասավորությունը պայմանավորված է.

Ա) հողամասի դիրքով

Բ) հեռավորությունների նորմատիվ պահանջներով

Շենքերի շքամուտքերը առանձնացված են հասարակական նշանակության սենքերից: Բոլոր շենքերն ունեն թեքուղիներով կահավորված մուտքեր: Բոլոր շենքեր Չ1 տիպի աստիճանավանդակներով են: Վերելակները յուրաքանչյուր շքամուտքում երկուսն են՝ 400 և 800 կգ բեռնամբարձությամբ: Աստիճանավանդակների դռները նախատեսվում են ինքնափակվող եվ հակահրդեհային: Միջանցքները սարքավորված են ծխահեռացման համակարգով: Բոլոր բնակարանների շքամուտքերում նախատեսվում են հրդեհի ազդանշման տվիչներ: Բնակարանային օդորակիչների արտաքին բլոկները նախատեսված են քողարկված և պատշգամբներում տեղադրվող: Մեքենաների մուտքը յուրաքանչյուր բլոկի ստորգետնյա ավտոկայանատեղի 2-ն են՝ յուրաքանչյուրը երկկողմանի և քողարկված:

Բնակելի բոլոր շենքերի կոնստրուկտիվ համակարգը շրջանակակապային է: Շենքերի միջև ստորգետնյա ավտոկայանատեղիների կոնստրուկտիվ համակարգը՝ շրջանակային: Մից շինությունները միմյանցից առանձնացված են հակասեյսմիկ կարերով:

Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված է սեյսմիկ - III գոտու համար (9 բալ եվ ավելի):

Ստորգետնյա ավտոկայանատեղիների բարձրությունները տրված են պայմանական նիշերով: Բնակելի շենքերի 1-ին հարկերի հատակներից վերև բարձրությունները տրված են պայմանական նիշերով:

Պատերի արտաքին երեսպատումը նախատեսվում է օդափոխվող ճակատներով, նաեվ առկա են հատվածներ, որտեղ նախատեսվում է իրականացնել g/ա բարձրորակ սվաղ ֆասադային երկշերտ ներկմամբ: Ըստ պատվիրատուի ցանկության հնարավոր են նաև երեսպատման այլ նյութերի կիրառում, որոնք չեն հակասում ՀՀ գործող շինարարական նորմերին:

Ծածկերը -ե/բ միաձույլ սալեր

Միջնորմները - պեմզաբլոկ

Տանիքը - հարթ-համատեղված, ճկուն փաթթոցային ծածկույթով եվ կազմակերպված ջրահեռացումով

Հատակները նախատեսվում է կառուցել բոլոր միջհատակային հաղորդագծերը տեղադրելուց հետո

Համաշինարարական աշխատանքները կատարել հծռկ 3.03.01-87-ով

ՆԱԽԱԳԻԾԸ ՄՇԱԿՎԱԾ Է ՀԱՄԱՁԱՅՆ
ՀՀՇՆ 30-01-2014 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ
ՀՀՇՆ 31-01-2014 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ. ՄԱՍ1 .ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ
ՀՀՇՆ 21-01-2014 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ
ՀՀՇՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ

Նախագծման ընթացքում կառուցապատողը առաջնորդվել է ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաեվ պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության եվ էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշմամբ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից կմշակվի համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

1.6.3 *Իրավիճակային հատակագիծ*


ԵՐԿԱԹԳԻԾ
ՀՐԱ
ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ
ԱՐՏԱՔԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾ
85 մ
CPS բենզալցակայան
M4
h of the Intercession of the...
Eldorado


ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:2500
ԵՐԿԱԹԱԳԻԾ
0428
0429
0430
0431
0345
0382
0384
0383
Հ. ԱՅՎԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ
ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ
(ԱՃԱՌՅԱՆ Փ. N 53)
ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ
(ԱՃԱՌՅԱՆ Փ. N 53/1)
113910
37390
136430
253853
247348
82524
52439
1049
71166
132750
85822
96171
122500
52296
248701

1.6.4 *Գլխավոր հատակագիծ*

1.6.5 *Մոտակա հուշարձաններ և դրանց պահպանման գոտիներ*



2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1©Աշխատանքների բնույթից ելնելով[a] բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2©Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի« աշխատանքների ընդհանրացված փուլի« կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3©Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1©Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ)« համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում« լուսավորում« օդափոխում« պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)« սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով[a] գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2©Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3©Աշխատանքի պաշտպանության[a] անվտանգության տեխնիկայի« արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4.Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման« հրահանգման ժամանակին և որակով անցկացման« անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման« արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

2.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 4 փուլ՝, ընդհանուր տևողությունը 5 տարի:

Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխաածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքների շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները փոսորակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” էքսկավատորով:

Յուրաքանչյուր շենքի պատող և կրող կոնստուկցիաների իրականացման համար ընտրված է TEREX CTT 91-TS12 մակնիշի աշտարակային կռունկ: Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրա ժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնն երը ըստ ՇՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոսորակի ընդունման ակտ):

Բեռի ուղղահայաց և հորիզանական տղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշահարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կռունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կռունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Կռունկով բեռի տեղափոխումը բացառիկ դեպքերում գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով կատարվում է շինարարության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, ապահովվելով բեռի անվտանգ տեղափոխումը, անվտանգության ճարտարագետի մշտական ներկայությունը:

Աշտարակային կռունկի մոնտաժումը ե/բետոնե ծածկի սալի վրա կատարվում է նախագծի կոնստրուկտորի հիմնավորված լոկալ հաշվարկով: Աշտարակային կռունկի մոնտաժման աշխատանքները իրականացվում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից ըստ կռունկի անձնագրային տվյալների:

Ապրանքային բետոնը պատրաստվելու է շին.հրապարակում, տեղադրվելու է ժամանակակից բետոնահանգույց, որի համար ընկերությունը օրենքով սահմանված կարգով կստանա արտանետում կատարելու թույլտվություն:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քանի որ այս տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ իրականացնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց զերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ոռոգման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցմել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Ստորև ներկայցվում է շինհրապարակի գլխավոր հատակագիծը:

Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են

Բնակելի համալիրի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Քանդման աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

2.2 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում, նշված շինարարական մեքենաների պահանջարկը հաշվարկվել է շինարարական աշխատանքների իրականացման 2 փուլի համար:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	KOMATSU PC 400-7	5
2	Բուլդոզեր	KOMATSU D37-EX-22	3
3	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	2
4	վերամբարձ ավտոկռունկ	Галичанин КС-65713-1	2
5	Աշտարակային կռունկ	TEREX CTT 91-TS12	4
6	Տոփանիչ	CR 3/60	3
7	Գույքային կաղապարամած	կոմպլ.	1
9	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИВ-102А	2
10	Փոխարկիչ թրթրիչների համար	ИВ-4	2
11	Եռակցման տրանսֆորմատոր	СТН-500	2
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	3
13	Ձեռքի էլեկտրական դուր	ИЭ-1208Э	3
14	Հղկող մեքենա	ИЭ-2201	3
15	Թրթրագլդոն	HAMI 3410	1
16	Ավտոբետոնախառնիչ	СБ-69Б	հաշվարկով
17	Ավտոբետոնատար	КрАЗ-65055	հաշվարկով
18	Ինքնաթափ ավտոմոբիլ	МАЗ-5550	հաշվարկով

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարկան աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

2.3 Ժամանակավոր շինություններ

Շինհրապարակում կտեղադրվենհետևյալ ժամանակավոր շինությունները: Շինությունների տեղադիրքը կհստակեցվի նախագծային աշխատանքների ընթացքում:

N	ԱՆՎԱՆԱՑԱՆԿ
1	2
1	Պահակակետ
2	Ամրանի և փայտանյութի պահեստ
3	Քարի և սալիկների պահեստ
4	Սորուն նյութերի պահեստ
5	Գրասենյակ,բուժկետ
6	Հանդերձարան
7	Զուգարաններ
8	Ճաշարան
9	Ցնցուղարան

2.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հողային աշխատանքների ծավալները հաշվարկված են շինարարական աշխատանքների իրականացման 2 փուլի համար՝

Հանույթ՝ 115500 մ³

Հետլիցք՝ 34650 մ³

Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Երևան քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր, համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 90 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 5 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 70 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ - 15 մարդ

2.4.1 *Նյութերի և բնառեսուրսների օգտագործում*

Բնակելի շենքերի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

a)Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

WԵ.ї. = (n x N + n_1 x N_1) x T, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1– սպասարկող աշխատոների թվաքանակն է՝ 85 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 2916 օր

$W_{խ.տ.}$= (5 x 0.016 + 85 x 0.025) x 2916 = 3969 մ³/շին. ժամ. կամ 2.2 մ³/օր:

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

U_1 = S_1 x K_1 x T, որտեղ՝

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1200

U_1 = 500 x 0.0015 x 1200 = 675 մ³/շին. ժամ. կամ 0.75 մ³/օր

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 4644 մ³/շին. ժամ:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից, համաձայն Վեոլիա ջուր ՓԲԸ կողմից տրվող տեխնիկական պայմանի : Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

2.5 Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների: Կառուցապատող ենկերությունը դիմել է Վեոլիա Ջուր ՓԲԸ-ին տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Երևան քաղաքի, Ավան վարչական շրջան, Հ. Աճառյան հ. 53 և հ. 53/1 հասցեներում հատկացված հողատարածքում, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագծի <<Ջրամատակարարում և կոյուղի>> բաժինն իր մեջ կներառի՝

1. խմելու տնտեսական, հակահրդեհային ցանց,
2. տնտեսական կենցաղային կոյուղի,
3. մթնոլորտային և ներքին ջրահեռահեռացման համակարգեր:

Ջրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ կողմից տրվող Ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմաններին համապատասխան՝ ջրամիացման, հակահրդեհային հիդրանտի տեղադրման և գոյություն ունեցող կոյուղագծին միացման նախագծային լուծումներին համաձայն:

Ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

Ջրաչափական հանգույցի և հիդրանտի տեղադրման կետերում կառուցվելու է դիտահորեր:

Ջրատարում վթարների և վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունը ապահովելու, ինչպես նաև ներքին հակահրդեհային ջրաքանակ ապահովելու համար նախատեսվում է պահուստային բաքի տեղադրում, որը միաժամանակ կարգավորող դեր կատարում է:

1. Խմելու տնտեսական ջրմուղ (Ջ1)

Համակարգը նախատեսված է բնակելի շենքերի խմելու-տնտեսական կարիքների համար: Ջրի մուտքը ավտոկայանատեղի նախատեսվում է ներհրապարակային ջրմուղի ցանցից: Ներքին ջրամատակարարման համար ավտոկայանատեղիում՝ -3.90 նիշում, նախատեսվում է պահուստային ջրի կուտակի բաքեր և պոմպակայաներ:

Կանգնակներից բնակարանների ջրամատակարարումը իրականացվում է յուրաքանչյուր հարկի համար առանձին կոլլեկտորով, որից դուրս եկող ջրի գծերի վրա տեղադրվում է ջրաչափ և ֆիլտր:

Տաք ջրամատակարարումը իրականացվում է յուրաքանչյուր բնակարանի համար նախատեսված պատի երկկոնտուրանի կաթսաներով: Բոլոր անհրաժեշտ տեղերում նախատեսվում է փակող արմատուրա: Կանգնակները և միջանցքների բաշխիչ ցանցը նախատեսված են d=76-32մմ պոլիպրոպիլենե խողովակներից: Բնակարանների մուտքագծերը և ցանցը d=25-20մմ պոլիպրոպիլենե խողովակներից են: Բոլոր խողովակները և ջերմամեկուսացվում են:

2. Հակահրդեհային ջրմուղ (Ջ2)

Համակարգը նախատեսված է բնակելի շենքերի հակահրդեհային կարիքների համար: Հակահրդեհային ջրամատակարարումը նախատեսված է ավտոկայանատեղիում՝ -3.90 նիշում պահուստային ջրի կուտակիչ բակից: Հակահրդեհային ջրամատակարարման ցանցի համար նախատեսված է առանձին պոմպակայան: Հրդեհամարումը իրականացնել

պահարաններում տեղադրված զույգված dy=50մմ հակահրդեհային ծորակներով (2 շիթ, յուրաքանչյուրը՝ 2.5լ/վրկ)։
Յուրաքանչյուր պահարանում նախատեսվում է նաև երկու հատ փրփուրե կրակմարիչ։ Պողպատե խողովակները ներկվում են։ Ջրի մուտքագծի վրա տեղադրվելու է արտաքին հիդրանտ։

3. Տնտ-կենցաղային կոյուղի (Կ1)

Համակարգը նախատեսված է բնակարանների և հասարակական մասի սանիտարատեխնիկական սարքերից տնտ-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար։ Շենքից կեղտաջրերի հեռացումը կատարվում է բակային ցանց, որտեղից քաղաքային կոյուղու համակարգ։ Ընդունվել են կոյուղու պոլիվինիլքլորիդե dy=100-50 մմ խողովակներ։

4. Մթնոլորտային կեղտաջրերի կոյուղի (Կ2)

Համակարգը նախատեսված է շենքի տանիքից, բաց պատշգամբներից ձնհալքի և անձրևաջրերի հեռացման համար։ Ջրերի հեռացումը կատարվում է բակային ցանց, որտեղից միացվում է հեղեղատային կոյուղու բակային համակարգին։ Ընդունվել են կոյուղու պոլիվինիլքլորիդե dy=100մմ և dy=50մմ խողովակներ։

2.6 *Ընդհանուր օդափոխության համակարգեր*

ՀՀ, ք. Երևան, Ավան վարչական շրջան, Հ. Աճառյան հ. 53 և հ. 53/1 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալարի ջեռուցման և օդափոխության նախագիծն իրականացված է՝ համաձայն պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի և ՀՀ գործող շինարարական նորմերի և կանոնների՝

ՀՀՇՆ IV–12-02.01-00 «Ջեռուցում, օդափոխություն, օդի լավորակում»

ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»

ՀՀՇՆ II-7.02-95 «Շինարարական ջերմաՓԻզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների նախագծման նորմեր»

СНиП 2.08.02.89 «Общественные здания»

СНиП 21-01-97* «Пожарная безопасность зданий и сооружений»

СП 7.13130.2013 «Отопление, вентиляция и кондиционирование. Требования пожарной безопасности»

СП 154.13130.2013 «Встроенные подземные автостоянки. Требования пожарной безопасности»

СП 113.13330.2012 «Стоянки автомобилей». Актуализированная редакция СНиП 21-02-99*

Համալիրի բնակելի մասնաշենքերում նախատեսված է բնական արտածման օդափոխության համակարգեր խոհանոցներից, սանհանգույցներից և լոգասենյակներից՝ հորանների մեջ 0160– 0125մմ օդատարերը 2մ բարձրացնելով։ Գազօջախներից նախատեսված է տեղական արտածման համակարգեր, որոնց օդատարերը առանձին-առանձին բարձրանում են տանիքից 1մ վերև։

Հասարակական հարկերում և ավտոկայանատեղիում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկերի առաստաղների տակ:
Ներածումը և արտածումը կատարվում է կարգավորվող ճաղավանդակների միջոցով:
Ավտոկայանատեղիների օդի արտածումը իրականացվում է ներքևի և վերևի գոտիներից հավասարաչափ: Հրդեհի դեպքում մարդկանց անվտանգ տարհանման և ծխի տարածումը խոչընդոտելու համար նախատեսված է հակահրդեհային հետևյալ միջոցառումները՝

- Հրդեհի ազդանշանի դեպքում տարածքների օդափոխության համակարգերի անջատում:
- Ստորգետնյա հարկերի ավտոկայանատեղերը բաժանված են չորս պայմանական հակածխային գոտիների, որոնց ծխահեռացումն իրականացվում է տանիքային օդամուղերի միջոցով: Հրդեհի ժամանակ միանում են երկու հակածխային գոտու օդամուղերը (մյուս երկուսը առանձված են հակահրդեհային դարպասներով):
- Բնակելի հարկերի միջանցքներից ծխի հեռացումը կատարվում է տանիքում տեղադրված հակածխային արտածման օդամուղի միջոցով:
- Հարկում հակածխային արտածման համար միջանցքի պատին տեղադրվում են ծխահեռացման փականներ 8160 հրակայունությամբ:
- Միջանցքներում հեռացվող ծխի կոմպենսացիայի համար նախատեսված է արհեստական դրդմամբ հակածխային ներածման օդամուղ, որը նույնպես տեղադրվում է տանիքում:
- Վերելակների հորաններում նախատեսված են օդի դիմհարի համակարգեր, որոնք տեղադրվում են բնակեւի մասնաշենքի տանիքում:
- Ստորգետնյա հարկերում վերելակների և աստիճանավանդակների նախամուտքերումնախատեսված են օդի դիմհարի համակարգեր:

2.7 Էներգախնայողության միջոցառումներ

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութորով.
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ /пеноплекс/:
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

2.8 *Էլ. մատակարարում*

Կառուցապատող ընկերությունը դիմել է «ՀԷՑ» ՓԲԸ-ին էլեկտրամատակարարման տեխնիկական պայմաններ ստանալու համար:

2.9 *Գազամատակարարում*

Կառուցապատող ընկերությունը դիմել է «Գազպրամ Արմենիա» ՓԲԸ-ին գազամատակարարման տեխնիկական պայմաններ ստանալու համար:

2.10 *Կանաչապատման աշխատանքներ*

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի «Բնակելի համալիր տարածքի բարեկարգման և արդիականացման նախագիծ», որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108–Ն որոշման համապատասխան:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Բուսականության տեսակայնի և քանակային կազմը ներկայացված կանաչապատման սխեմայի վրա:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,

- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,

- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,

- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,

-Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգմնա հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

2.11 *Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ*

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝ $n_6 = 0.006$ մ³/մ²

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 31928$ մ²,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, K = 2

t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, t = 175 օր

$$W_{u.3} = (0.006 \times 48136) \times 2 \times 175 = \underline{\mathbf{101085.6}} \text{ մ}^3/\text{տարի}$$

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

Ք. Երևան, Ավան վարչական շրջան, հ. Աճառյան 53 եվ 53/1 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագիծը մշակված է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 16092022-01-0240, N 14102022-01-0193 վկայականների եվ 25.07.2022 թվականին տրված N 01/18-07/1-Դ-22806-667 ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայն:

3.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևան քաղաքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆրակցիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Հետազոտվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Ավան վարչական շրջանում:

Համաձայն “ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻՋՅԱՆՆԵՐ” ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներա-երկրաբանական եզրակացության հետազոտվող տարածքին բնորոշ են հետևյալ պայմանները.

<u>Գեոմորֆոլոգիական տեսակետից</u> տարածքի սահմաններում ռելիեֆի հիմնական տարրերն են հանդիսանում գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը բնորոշվող ռելիեֆային հիմնական տարրերն են Կոտայքի հրաբխային սարավանդի լանջերը, որոնք հյուսիսից հարավ հարում են Հրազդան գետի զառիթափ լանջերին: Նախագծվող տարածքը ներկայացնում է հրաբխային դելյուվիալ լանջի մի հատված, որը քաղաքաշինական նպատակներով ենթարկվել է հարթեցման և որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը տատնվում են 1203-1204մ մետրերի սահմաններում:

<u>Հիդրոերկրաբանական տեսակետից</u> տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: ՈՒսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Նախկինում տվյալ տեղամասում մինչև 70 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում՝ բեռնաթափվելով Հրազդան գետի հովտում, իսկ ավելի խորը տեղակայված

ջրերը սնում են Արարատյան հարթավայրի հորիզոնները: Ավան համայնքի տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

3.2 Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի տվյալների՝ (նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցեն դարակարգի հրաբխային հոսքերը՝ դոլերիտային բազալտները, որոնց ծածկում են ժամանակակից տեխնոգեն և էլյուվիալ-դելյուվիալ առաջացումները:

Տեղամասը բաղկացած է հետևյալ գրունտերից վերևից–ներքև: Երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում հետևյալ 4 շերտերը:

Շերտ-1 Խճային գրունտ Խճային գրունտ, մանրախճի պարունակությամբ, կավավազային-ավազակավային լցոնի մինչև 25-30% պարունակությամբ:

Շերտ-2 **Բազալտներ** ամուր մոխրագույն, կապտամոխրահույն ծակոտկեն, տեղ- տեղ խոռոչավոր, ճեղքավորված բեկորային անջատումներով, կարծր: Շերտում հանդիպում են խարամների ոչ մեծ հզորության գնդաձև և ոսպնյակաձև ներփակումներ: Շերտում լցանյութը կավավազային է 10-15%

Շերտ-3 **Բազալտ** մոխրագույն, տեղ-տեղ խանամի պարկերով, մեծաբեկորային, չեղքավորված, ամուր, արմատական տեղադրմամբ, տարածքում համատարած է:

Ստացված տվյալների հիման վրա պարզ է դառնում նախագծվող տարածքի երկրաբանալիթոլոգիական կտրվածը, որին մասնակցում են՝ խճայն գրունտներ, բազալտներ և բազալտ խարամի պարկերով:

3.3 Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան –30 °C, բացարձակ մաքսիմումը հասնում է +42 °C: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի

հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմայաբանություն» СНиП II-7.01-2011 տվյալների համաձայն:

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Արաբկիր» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը միջին , մմ մաքսիմալ օրական												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
28 22	31 28	38 26	48 34	55 47	29 47	16 34	8 22	11 47	31 34	30 30	28 26	**353** **47**

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-”Արաբկիր” մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

Քամու բնութագիրը

Աղյուսակ 2.4.

Միջին տարեկան	Ամիսներ	Կրկնելիությունը, % / Միջին արագությունը, մ/վ ըստ ուղղությունների

մթնո-լորտային ճնշում, (հՊա)		Հյուսի-սային (Հս)	Հյուսիս-Արե-վելյան (ՀսԱրլ)	Արե-վելյան (Արլ)	Հարավ-Արե-վելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արև-մտյան (ՀվԱրմ)	Արև-մտյան (Արմ)	Հյուսիս-Արև-մտյան (ՀսԱրմ)
2	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**
889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3
		1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9
	ապրիլ	15	29	6	8	12	17	9	4
		3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5
	հուլիս	28	32	3	3	8	16	7	3
		6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6
	հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3
		2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0

Արեգակնային փայլի տևողության, ճառագայթման ուժգնության բնութագիրը և ամպամած օրերի քանակը բերված են 2.5 – 2.7 աղյուսակներում:

Արեգակնային ճառագայթում (Երևան-Ագրո)

Աղյուսակ 2.5.

Գումարային ճառագայթում (ուղիղ + ցրված), որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկինքի դեպքում, ՄՋ/մ²												Տարեկան գումարային
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
325	391	637	799	963	955	965	858	673	532	349	293	7740

Արեգակնային փայլի տևողությունը (Երևան “Ագրո”)

Աղյուսակ 2.6.

Տևողությունը ըստ ամիսների, ժամ												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
84	109	162	200	267	320	351	332	293	231	144	85	2578

Ամպամած օրերի քանակը (Երևան “Ագրո”)

Աղյուսակ 2.7.

Ըստ ամիսների, օր												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
11	7	5	2	0,6	0,08	0	0,08	0,1	1	4	10	41

Տարվա հաշվարկային կլիմայական պարամետրերը բերված են 2.8 – 2.9 աղյուսակներում:

Կլիմայական բնութագիրը տարվա ցուրտ ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Աղյուսակ 2.8.

Օդի ջերմաստիճանը, °C										Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ և գրունտի սառչման խորությունը		Քամի	
ամենա ցուրտ օրվա		ամենա ցուրտ հինգօրյակի		միջինը ամենացուրտ ժամանակահատվածում	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական ամպլիտուդա	Տևողությունը (օր) միջին ջերմաստիճանը (°C) ժամանակահատվածում, երբ միջին օրական ջերմաստիճանը ոչ ավելի քան՝			միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	գերակշռող ուղղություն-ը ընկերեմբեր-փետրվար ամիսներին	հունվարին միջին արագությունները առավելագույնը, ըստ ռումբերի, մ/վրկ
ապահովվածություն															
0.98	0.92	0.98	0.92				0	8	10						
-21	-19	-19	-17	-3.6	-27	8.3	70 -2.4	140 1.0	159 1.8	78	68	132	60	Հվ	2.6

Կլիմայական պարամետրերը տարվա տաք ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Աղյուսակ 2.9.

Օդի ջերմաստիճանը, °C					Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ, մմ		Քամի	
ապահովվածություն		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական ամպլիտուդա						
0.95	0.99				միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	օրական մաքսիմում	գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	հուլիսին միջին արագություններից նվազագույնը, ըստ ռումբերի, մ/վրկ
32	34	42	33	15.6	45	28	154	51	Հվ	2.1

3.4 Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորնգի կենտրոն” ՊՈԱԿ-ի կողմից:

Երևան քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 դիտակետ և 5 դիտակայան: 2019 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները, սակայն տարվա ընթացքում և քաղաքի տարբեր հատվածներում դիտվել են գերազանցումներ: Իրականացված դիտարկումների 24%-ում դիտվել են փոշու, 15%-ում՝ ծծմբի երկօքիդի, 3%-ում՝ ազոտի երկօքիդի, 0.1%-ում՝ գետնամերձ օզոնի համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցումներ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման աղբյուր- ներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերութ- յունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:
2019 թվականինի տվյալների համաձայն քաղաքում անշարժ աղբյուրներից արտանետված վնասակար նյութերում գերակշռում են ածխաջրածինները, ածխածնի մոնօքսիդը, փոշին, ծծմբի երկօքսիդը և ազոտի օքսիդները:

Աղյուսակ 6. Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները, 2020թ.

Որոշվող միացություն	*Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)*	*ՍԹԿ-ից գերազանցումների քանակը 2020թ. ընթացքում*		*Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ³*	*ՍԹԿ միջին օրական, մգ/մ³*
		>1 ՍԹԿ	*>5 ՍԹԿ*		
Ծծմբի երկօքսիդ	*0.054 (դիտ. N2)*	*5*	*-*	*0.012*	*0.05*
Ազոտի երկօքսիդ	*0.099 (դիտ. N7)*	*372*	*35*	*0.032*	*0.04*
Փոշի	*0.563 (դիտ. N1)*	*316*	*15*	*0.116*	*0.15*
Գետնամերձ օզոն	*0.038 (դիտ. N8)*	*14*	*14*	*0.004*	*0.03*

Ածխածնի մոնօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները 2020թ.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին տարեկան և միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին տարեկան և միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին տարեկան և միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.











Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

3.5 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է "Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն" ՊՈԱԿ-ի կողմից, որի տվյալները 2020 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, կալիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով[2]:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և վանադիումով:[3]

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

3.6 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

3.7 Հողային ռեսուրսներ

Նախատեսվող շինարարական աշխատանքները ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 38500 մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 5373 մ^3 հետլիցք: Ավելցուկային 33127մ^3 ծավալով

[2] Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն. Տեղեկագիր 2020թ
[3] Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն. Տեղեկագիր 2020թ.

հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից:

3.8 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

3.9 Կենդանական աշխարհ

Երևանի շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով:

Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրաույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:
Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատ սցինկը, օձերից՝ կույր օձուկը, ռնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրազդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Ավան վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ:

3.10 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները, հաշվարկված է շինաշխատանքների իրականացման 2 փուլի համար՝

	Անվանումը	Վտանգավո-ության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը
1.	Շինարարական աղբ	IV	9120060001004	2200 մ³
2.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով	V	31401100 08 09 5	34650 մ³

	չաղտոտված հող			
3.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	4.5 տ

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բազմահարկ բնակելի համալիրի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

3.11 Ավան վարչական շրջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ

Այս բաժնում ներկայացնում է Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը: Ցանկում ներառված է ընդամենը 179 հուշարձան (16 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Աշտարակ	մ.թ.ա. 2 հզ կես	հս-աե եզրին	1.2/1	Հ	«Բերդի գլուխ» (Կալադաղ) բարձունքին, հայտնաբերված 1984 թ.
Բնակատեղի	մ.թ.ա. 6 դ. - մ.թ. 2 դ.	Գետառի աջ ափին, Ավանի Կաթողիկե եկղ. հս	1.2/2	Հ	
Գերեզմանոց՝ Ավանի հյուսիսային	10-19 դդ.	Գետառի աջ ափին, Ավանի Կաթողիկե եկեղեցուց հս	1.2/2.1	Հ	
Մատուռ	12-14 դդ.		1.2/2.1.1	Հ	
Խաչքար	10 դ.		1.2/2.1.2	Հ	հվ մասում, պահպանված է ստորին մասը, ընկած է գետնին
Խաչքար	10 դ.		1.2/2.1.3	Հ	կնտ. մասում, եռատված
Խաչքար	10-11 դդ.		1.2/2.1.4	Հ	հվ-ամ մասում, բեկորված
Խաչքար	12-13 դդ.		1.2/2.1.5	Հ	կնտ. մասում,

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
					բեկորված, արձանագիր
Խաչքար	12-13 դդ.		1.2/2.1.6	Հ	հվ-ամ մասում, բլրալանջին, պահպանված է 3/4 մասով
Խաչքար	12-13 դդ.		1.2/2.1.7	Հ	հս մասում, պահպանված է միայն խաչազարդ պատվանդանը
Խաչքար	12-13 դդ.		1.2/2.1.8	Հ	հվ մասում, պահպանված է ստորին ձախակողմյան մասը պոչուկով
Խաչքար	12-13 դդ.		1.2/2.1.9	Հ	հս-աե մասում, պահպանված է ստորին կեսը
Խաչքար	12-13 դդ.		1.2/2.1.10	Հ	հս-ամ մասում, պահպանված է վերին ձախակողմյան մասը
Խաչքար՝ Տիրիկի	1221 թ.		1.2/2.1.11	Հ	պահպանված է միայն պատվանդանը 2 կեսով՝ գերեզմանոցի հս և հվ եզրերում
Խաչքար	13 դ.		1.2/2.1.12	Հ	հս մասում, խաչազարդ պատվանդանի հարևանությամբ, արձանագիր
Տապանաքար	13 դ.		1.2/2.1.13	Տ	հս մասում, 1221 թ. խաչքարի պատվանդանի աջակողմյանը
Տապանաքար	16-17 դդ.		1.2/2.1.14	Տ	հս մասում, կանացի հարթաքանդակով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/2.1.15	Տ	հվ-աե մասում, քանդակազարդ
Տապանաքար	16-17դդ.		1.2/2.1.16	Տ	աե մասում, սեղանաձև, կենցաղային քանդակներով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/2.1.17	Տ	հվ եզրին, մարդու

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
					հարթաքանդակով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/2.1.18	Տ	հվ մասում, մարդու հարթաքանդակով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/2.1.19	Տ	հվ մասում, մարդու հարթաքանդակով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/2.1.20	Տ	հվ-աե մասում, մարդու հարթաքանդակով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/2.1.21	Տ	հվ-աե մասում, մարդու հարթաքանդակով, տեղահանված
Տապանաքար	16-17 դդ.		1.2/2.1.22	Տ	հվ մասում, մարդու հարթաքանդակով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/ 2.1.23	Տ	հվ մասում, մարդու հարթաքանդակով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/2.1.24	Տ	հվ մասում, մարդու հարթաքանդակով, տեղահանված
Տապանաքար՝ Ուլուբաբի	1650 թ.		1.2/2.1.25	Հ	աե եզրին, տեղահանված
Տապանաքար	17-18 դդ.		1.2/2.1.26	Տ	հվ մասում, օրորոցաձև, տեղահանված
Բնակատեղի Ավան–Առինջ	մ.թ.ա. 3-1 հզ	Մարշալ Բաբաջանյան փ.	1.2/3	Հ	Ավան-Առինջ թաղամաս լճակի հս-աե և հվ-ամ ափերին
Բնակելի տուն	20 դ. սկզբ	Մարշալ Խուդյակով փ. 97	1.2/4	Տ	
Բնակելի տուն Գևորգյանի	1912 թ.	Մարշալ Խուդյակով փ. 2-րդ նրբ. 17	1.2/5	Տ	
Գերեզմանոց Ավանի կենտրոնական	5-20 դդ.	Ն. Սաֆարյան և Մարշալ Խուդյակով փ. միջև	1.2/6	Հ	
Խաչքար	9-10 դդ.		1.2/6.1	Հ	գերեզմանատան կենտրոնական մասում
Խաչքար	9-10 դդ.		1.2/6.2	Հ	գերեզմանատան կենտրոնական մասում, նախորդից քիչ հեռու
Խաչքար	9-10 դդ.		1.2/6.3	Հ	հվ մասում

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Խաչքար	10 դ.		1.2/6.4	Հ	հվ-ամ մասում, պահպանված է վերին կեսը
Խաչքար	10 դ.		1.2/6.5	Հ	կնտ մասում, պահպանված է ստորին մասը
Խաչքար	10-11 դդ.		1.2/6.6	Հ	ամ մասում
Խաչքար	10-11 դդ.		1.2/6.7	Հ	կնտ մասում, պահպանված է ստորին մասը
Խաչքար	10-11 դդ.		1.2/6.8	Հ	աե մասում
Խաչքար	11 դ.		1.2/6.9	Հ	հվ-աե մասում, վերին մասը ջարդված
Խաչքար	11 դ.		1.2/6.10	Հ	ամ մասում, ընկած գետնին
Խաչքար	11 դ.		1.2/6.11	Հ	ամ մասում, պահպանված է վերին մասը թռչնապատկերներով
Խաչքար	12 դ.		1.2/6.12	Տ	ամ մասում, բեկոր
Խաչքար	12 դ.		1.2/6.13	Տ	կնտ մասում, պահպանված է ստորին մասը
Խաչքար	12-13 դդ.		1.2/6.14	Տ	աե մասում, երկաստիճան պատվանդանին, պահպանված է ստորին մասը
Խաչքար	12-13 դդ.		1.2/6.15	Տ	հվ մասում, պատվանդանին, վերին մասը ջարդված
Խաչքար	12-13 դդ.		1.2/6.16	Տ	ամ մասում, պատվանդանին, պահպանված է ստորին մասը
Խաչքար	12-13 դդ.		1.2/6.17	Տ	ամ մասում, պահպանված է ստորին մասը
Խաչքար Սարգսի	1204 թ.		1.2/6.18	Հ	ամ մասում
Խաչքար	13 դ.		1.2/6.19	Հ	հվ-աե մասում, պատվանդանին, իրար կողքի

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
					կանգնեցված խաչքարերից ձախակողմյանը
Խաչքար	13 դ.		1.2/6.20	Հ	հվ-աե մասում, պատվանդանին, իրար կողքի կանգնեցված խաչքարերից աջակողմյանը
Խաչքար	13 դ.		1.2/6.21	Հ	հվ մասում, պատվանդանով, թեք ազուցված
Խաչքար	13 դ.		1.2/6.22	Տ	ամ մասում. պատվանդանը վերածվում է եռանկյունաձև տապանաքարի, պահպանված է խաչքարի ստորին մասը
Խաչքար	13 դ.		1.2/6.23	Տ	կնտ մասում, քանդակված քարաբեկորի վրա
Խաչքար	13 դ.		1.2/6.24	Տ	կնտ մասում
Խաչքար	13 դ.		1.2/6.25	Տ	հվ մասում, պահպանված է ստորին մասը
Խաչքար	13 դ.		1.2/6.26		հվ մասում, տեղաշարժված
Խաչքար	13 դ.		1.2/6.27	Տ	հվ մասում, պահպանված է ստորին մասը պոչուկով
Խաչքար	15 դ.		1.2/6.28	Տ	հվ-ամ կողմում, պահպանված է վերին մասը
Խաչքար՝ Մուլքանշահի, Վարծելի և ծնողների	15 դ.		1.2/6.29	Հ	կնտ մասում
Խաչքար՝ Խերխաթունի	1466 թ.		1.2/6.30	Հ	աե մասում, տեղահանված
Խաչքար	1471 թ.		1.2/6.31	Հ	կնտ մասում, վարդագույն տուֆե պատվանդանին

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
					կանգնեցված զույգ խաչքարերից աջակողմյանը
Խաչքար	1486 թ.		1.2/6.32	Հ	հս մասում, Երևան - Գառնի ճանապարհի եզրին
Խաչքար՝ Նեքամատ Աղայի	1507 թ.		1.2/6.33	Հ	հս մասում, իրար կողքի կանգնեցված զույգ խաչքարերից աջակողմյանը
Խաչքար՝ Թահայի	1571 թ.		1.2/6.34	Հ	հս մասում, իրար կողքի կանգնեցված զույգ խաչքարերից ձախակողմյանը
Խաչքար	1573 թ.		1.2/6.35	Հ	հս մասում, իրար կողքի կանգնեցված 3 խաչքարերից մեջտեղինը
Խաչքար՝ Ազարիայի և այլոց	1590 թ.		1.2/6.36	Հ	կնտ մասում, իրար կողքի կանգնեցված խաչքարերից ձախից 3-րդը
Խաչքար	1591 թ.		1.2/6.37	Հ	հվ-ամ մասում
Խաչքար	16 դ.		1.2/6.38	Հ	2-րդ աշխարհամարտում զոհված ավանցիների հուշարձանից 100 մ հվ, ընդհանուր պատվանդանին կանգնեցված զույգ խաչքարերից ձախակողմյանը. վերնամասը երկթեք կոտրված
Խաչքար՝ Թուխթարի	16 դ.		1.2/6.39	Հ	կենտրոնական մասում, պահպանված է վերնամասը
Խաչքար՝ Սարգսի, Ազարիայի և Մարգարիտի	16 դ.		1.2/6.40	Հ	հվ մասում
Խաչքար՝ Ստեփանոսի	16 դ.		1.2/6.41	Հ	հվ-ամ մասում. պատվանդանին, իրար կողքի կանգնեցված

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
					խաչքարերից ձախակողմյանը կազմող՝ Գուրգեն
Խաչքար՝ Հապիպ Սուլթանի	16 դ.		1.2/6.42	Հ	հվ մասում, իրար կողքի կանգնեցված խաչքարերից աջակողմյանը կազմող՝ Գրիգոր
Խաչքար	16 դ.		1.2/6.43	Հ	հվ-ամ մասում
Խաչքար	16 դ.		1.2/6.44	Հ	հվ-ամ մասում, պահպանված է ստորին մասը վարդյակով
Խաչքար	16 դ.		1.2/6.45	Հ	հվ-ամ մասում, պահպանված է միջին մասը, տեղափոխված
Խաչքար	16-17 դդ.		1.2/6.46	Հ	կնտ մասում, վերին մասը ջարդված, իրար կողքի կանգնեցված խաչքարերից ձախից 1-ինն է
Խաչքար	16-17 դդ.		1.2/6.47	Հ	կնտ մասում, վերին մասը ջարդված, իրար կողք կանգնեցված խաչքարերից ձախից 2-րդն է
Խաչքար	16-17 դդ.		1.2/6.48	Հ	աե մասում
Խաչքար	16-17 դդ.		1.2/6.49	Հ	հվ մասում, պատվանդանով, վերին մասը ջարդված
Խաչքար՝ Կիրակոսի և Շամիրի	17 դ.		1.2/6.50	Հ	կնտ մասում, պահպանված է վերին մասը
Կոթող	5-6դդ.		1.2/6.51	Հ	աե մասում
Տապանաքար	13 դ.		1.2/6.52	Տ	հվ մասում, հարթ, խաչապատկերով
Տապանաքար	13 դ.		1.2/6.53.	Տ	հվ սասում, երկթեք ավարտով
Տապանաքար	13 դ.		1.2/6.54.	Տ	հվ մասում, երկթեք ավարտով
Տապանաքար	1462 թ.		1.2/6.55.	Հ	կնտ մասում

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Ամիրգուլի					
Տապանաքար Հովհաննեսի, Համբարձումի և Գավառեցի Մելիքսեթ երեցի	1581 թ.		1.2/6.56.	Հ	հվ-ամ մասում
Տապանաքար	16 դ.		1.2/6.57.	Հ	հվ-ամ մասում, կազմող՝ Մելիքսեթ
Տապանաքար	16 դ.		1.2/6.58.	Հ	հվ-ամ մասում, օրորոցաձև
Տապանաքար	16 դ.		1.2/6.59.	Հ	հվ մասում, Հապիպ սուլթանի խաչքարի դիմաց
Տապանաքար Ազարիայի	16 դ.		1.2/6.60.	Հ	կնտ մասում, ուղղանկյունաձև
Տապանաքար	16 դ.		1.2/6.61.	Հ	ամ մասում, ուղղանկյունաձև
Տապանաքար Մարտիրոսի	16-17 դդ.		1.2/6.62.	Հ	կնտ մասում
Տապանաքար	16-17 դդ.		1.2/6.63.		հվ-աե մասում, մարդու հարթաքանդակով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/6.64.	Հ	ամ մասում, մարդու հարթաքանդակով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/6.65.	Հ	ամ մասում, մարդու հարթաքանդակով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/6.66.	Հ	ամ մասում, մարդու հարթաքանդակով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/6.67.	Հ	ամ մասում, մարդու հարթաքանդակով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/6.68.	Հ	ամ մասում, մարդու հարթաքանդակով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/6.69.	Հ	հվ-աե մասում, մարդու հարթաքանդակով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/6.70.	Հ	ամ մասում, մարդու հարթաքանդակով
Տապանաքար	16-17 դդ.		1.2/6.71.	Հ	կնտ մասում, զարդաքանդակ խաչապատկերով, օրորոցաձև
Տապանաքար Խասփուշի	1610 թ.		1.2/6.72	Հ	ամ մասում
Տապանաքար	1645 թ.		1.2/6.73	Հ	ամ մասում

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Նուբարի					
Տապանաքար Գուլամիրի	1653 թ.		1.2/6.74	Հ	ամ մասում, օրորոցաձև
Տապանաքար Սիմեոնի	1656 թ.		1.2/6.75	Հ	աե մասում, գետնաթաղ
Տապանաքար	17 դ.		1.2/6.76	Հ	աե մասում, պատկերազարդ, օրորոցաձև
Տապանաքար Շահզամանի	1796 թ.		1.2/6.77	Հ	ամ մասում
Տապանաքար Մարկոսի	1799 թ.		1.2/6.78	Հ	ամ մասում, օրորոցաձե
Տապանաքար Մովսես Կարապետովի	1837 թ.		1.2/6.79	Հ	ամ մասում
Տապանաքար	18-19 դդ.		1.2/6.80	Հ	ամ մասում, պատկերազարդ, օրորոցաձև
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհված ավանցիներին	1976 թ.		1.2/6.81	Տ	ճարտ.՝ Ս. Քյուրքչյան, քանդ.՝ Ե. Վարդանյան, ամ եզրին
Տապանաքար	16 դ.	Ն. Սաֆարյան և Մարշալ Խուդյակով փ. միջև, Ավանի կնտ. գերեզմանոցի հիմնական հատվածի կենտր. մասում	1.2/6.82	Հ	ուղղանկյունաձև, քանդակազարդ
Տապանաքար	16-17 դդ.	Ն. Սաֆարյան և Մարշալ Խուդյակով փ. միջև, Ավանի կնտ. գերեզմանոցի հիմնական հատվածի կենտր. մասում	1.2/6.83	Հ	ուղղանկյունաձև, քանդակազարդ
Տապանաքար	16-17 դդ.	Ն. Սաֆարյան և Մարշալ Խուդյակով փ. միջև, Ավանի կնտ.	1.2/6.84	Հ	ուղղանկյունաձև, քանդակազարդ

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
		գերեզմանոցի հիմնական հատվածի աե մասում			
Դամբարանադաշտ	մ.թ.ա. 4 հզ, 2 կես - 2 հզ	Դուրյան և Չարենց թաղամասերից 150 մ աե	1.2/7	Հ	հայտնաբերված 1988 թ.
Դամբարան-1	մ.թ.ա. 3 - 2 հզ		1.2/7.1	Հ	դամբարանադաշտի հվ-ամ եզրին, հայտնաբերված 1988 թ.
Դարպաս	19 դ. վրջ - 20 դ. սկզբ	Մարշալ Խուդյակովի փ. 110	1.2/8	Հ	բնակելի տան դարպաս
Դարպաս	1907 թ.	Մարշալ Խուդյակովի փ. 1-ին նրբ. 13	1.2/9	Հ	բնակելի տան դարպաս
Եկեղեցական համալիր Ավանի Սբ. Աստվածածին (Կաթողիկե, Ծիրանավոր)	6-7 դդ.17 դ.	Մարշալ Խուդյակովի փ. 2-րդ նրբ.	1.2/10	Հ	
Եկեղեցի Սբ. Աստվածածին (Կաթողիկե, Ծիրանավոր)	591-602 թթ.		1.2/10.1	Հ	
Վիշապաքար	մ.թ.ա. 2 հզ		1.2/10.1.1	Հ	եկղ-ցու ամ մուտքի բարավորն է
Գերեզմանոց	17-18 դդ.		1.2/10.2	Հ	
Խաչքար Նինարի	1191 թ.		1.2/10.2.1	Հ	այժմ եկղ-ցու ներսում
Խաչքար	13 դ.		1.2/10.2.2	Հ	այժմ եկղ-ցու ներսում
Խաչքար Արղունփաշի	1605 թ.		1.2/10.2.3	Հ	ամ մուտքի մոտ, միևնույն պատվանդանին ամրացված զույգ խաչքարերից աջակողմյանը
Խաչքար	17 դ. սկզբ		1.2/10.2.4	Հ	ամ մուտքի մոտ, միևնույն պատվանդանին ամրացված զույգ խաչքարերից

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
					ձախակողմյանը
Կոթող	6-7 դդ.		1.2/10.2.5	Հ	այժմ եկղ-ցու ներսում
Տապանաքար	1666 թ.		1.2/10.2.6	Հ	այժմ եկղ-ցու ներսում
Պալատ Կաթողիկոսական	6-7 դդ.		1.2/10.3	Հ	եկղ-ցու հս կողմում
Եկեղեցական համալիր Սբ. Աստվածածին	4-7 դդ, 13-14 դդ.	Ն. Սաֆարյան փ.	1.2/11	Հ	այգիների մեջ, Սբ. Հովհաննես եկղ-ուց հս-աե
Եկեղեցի Սբ. Աստվածածին	4-7 դդ. 13-14 դդ.		1.2/11.1	Հ	
Խաչքար	13-14 դդ.		1.2/11.1.1	Հ	հենած եկղ-ցու խորանի պատին
Գավիթ	13-14 դդ.		1.2/11.2	Հ	ավերված, պահպանված հատվածաբար
Գերեզմանոց	5-6 դդ., 13-17 դդ,		1.2/11.3	Հ	եկեղեցու շուրջը
Խաչքար	վաղ մջնդ		1.2/11.3.1	Հ	պահպանված է 3/4 մասով
Խաչքար	վաղ մջնդ		1.2/11.3.2	Հ	պահպանված է 2/3 մասով
Խաչքար	վաղ մջնդ		1.2/11.3.3	Հ	պահպանված է 2/3 մասով
Խաչքար	10 դ.		1.2/11.3.4	Հ	որմնաքարի վրա
Խաչքար Հովսեփի	1323 թ.		1.2/12.3.5	Հ	եկղ-ցու մուտքից աջ
Խաչքար	16-17 դդ.		1.2/ 11.3.6	Հ	որմնաքարի վրա
Կոթող	5-6 դդ.		1.2/ 11.3.7	Հ	պատվանդանից ընկած
Տապանաքար Մելիքի և Դարասլանի	1289 թ.		1.2/ 11.3.8	Հ	
Տապանաքար	14-15 դդ.		1.2/ 11.3.9	Հ	պատկերազարդ
Խաչքար	վաղ միջնադար	Ն. Սաֆարյան փ., Ավանի Սբ. Աստվածածին կիսավեր եկեղեցու գերեզմանոցում	1.2/11.3.10	Հ	պահպանվել է 2/3-ը
Եկեղեցի Սբ. Աստվածածին (Ավանի ծխական	17-19 դդ.	Ավանի 14-րդ փ. 4-րդ նրբ.	1.2/12	Հ	1968 թ. կատարվել են վերականգնման և ամրացման

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
եկեղեցի)					աշխատանքներ
Խաչքար	13 դ.		1.2/12.1.	Հ	եկղ-ցու ամ ճակատին, մուտքից վերև
Գերեզմանոց	5-19 դդ.		1.2/12.2	Հ	եկղ-ցու շուրջ
Խաչքար	15-16 դդ.		1.2/12.2.1	Հ	կազմող՝ Մելքիսեթ քահանա, եկղ-ցու հս պատի տակ
Խաչքար Սարինի	16 դ.		1.2/12.2.2	Հ	եկղ-ցու հվ պատի տակ
Խաչքար Մահտեսի Գոհարի	1598 թ.		1.2/12.2.3	Հ	եկղ-ցու հվ պատի տակ
Խաչքար Խանփարի և Զաքարի	1600 թ.		1.2/ 12.2.4	Հ	եկղ-ցու հվ պատի տակ
Կոթող	5-6 դդ.		1.2/ 12.2.5	Հ	պահպանված է պատվանդանը, որին փորագրված է 1435 թ. նվիրատվական արձանագրություն (Ավանի տանուտերերի և Փոխրիկի) եկղ-ցու հս պատի տակ
Խաչքար	16 դ.	Ավանի 14 փ., 4-րդ նրբ., Սբ. Աստվածածին (ծխական) եկեղեցու հս պատի տակ, կոթողի արձանագիր պատվանդանի մոտ, գերեզմանոցում	1.2/12.2.6	Տ	պահպանվել է ստորին կեսը
Խաչքար	16-17 դդ.	Ավանի 14 փ., 4-րդ նրբ., Սբ. Աստվածածին (ծխական) եկեղեցու հս պատի տակ, կոթողի արձանագիր պատվանդանի մոտ, գերեզմանոցում	1.2/12.2.7	Տ	պահպանվել է ստորին կեսը
Եկեղեցի Սբ.	5-6 դդ.	Ն. Սաֆարյան փ.	1.2/13	Հ	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Հովհաննես					
Խաչքար Նորճիկի	15-16 դդ.		1.2/13.1	Հ	բեմի վրա, տեղափոխված Ավանի կենտրոնական գերեզմանոցից
Որմնանկար «Դանիելը առյուծների խմբում»	5-6 դդ.		1.2/13.2	Հ	հս պատին, թաղի 1-ին շարքի գոգավոր քարին
Որմնանկար «Ձուկ»	5-6 դդ.		1.2/13.3	Հ	հս պատին, բեմի վրա դրված քարին
Գերեզմանոց	5-17 դդ.		1.2/13.4	Հ	եկղ-ցու աե և հվ կողմերում
Խաչքար	13-14 դդ.		1.2/13.4.1	Հ	եկղ-ցուց ամ
Խաչքար	13-14 դդ.		1.2/13.4.2	Հ	եկղ-ցուց ամ
Խաչքար	13-14 դդ.		1.2/13.4.3	Հ	եկղ-ցուց ամ
Խաչքար Լույսի և Շաքարխաթունի	1297 թ.		1.2/13.4.4	Հ	որմնափակ, եկղ-ցու հս-աե անկյունում
Խաչքար	1451 թ.		1.2/13.4.5	Հ	եկե-ցու աե կողմում, եկղ-ուց մոտ 30 մ հեռու
Խաչքար	16 դ.		1.2/13.4.6	Հ	կազմող՝ Մելիքսեթ
Խաչքար Մարիանի	1610 թ.		1.2/13.4.7	Հ	տեղափոխվել է կենտրոնական գերեզմանոցից
Տապանաքար Գրիգորեսի	1282 թ.		1.2/13.4.8	Հ	եկղ-ուց 20 մ ամ
Տապանաքար	14 դ.		1.2/13.4.9	Հ	արձանագիր, հս պատի տակ
Տապանաքար Պարոն Շնահվորի	1301 թ.		1.2/13.4.10	Հ	արձանագիր, հս պատի տակ
Տապանաքար	14-15 դդ.		1.2/13.4.11	S	կոթողների դիմաց
Տապանաքար	16-17 դդ.		1.2/13.4.12	S	եկղ-ցու հս պատի տակ, մարդու հարթաքանդակով
Կոթող	5-6 դդ.		1.2/13.4.13	Հ	եկղ-ցու հս պատի աե անկյան մոտ
Կոթող	5-6 դդ.		1.2/13.4.14	Հ	եկղ-ցու հս պատի աե անկյան մոտ
Խաչքար	10 դ.	Ավանի 14-րդ փ. 4-րդ նրբ. 10	1.2/14	Հ	Թուխ Մանուկ նորաշեն սրբատեղում,

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
					տեղափոխված Ավանի հս գերեզմանոցից՝ 1970-ական թթ.
Հուշարձան «Վահագն Վիշապաքաղ»	1964 թ.	Սևանի խճ. սկզբնամասում	1.2/15	Հ	ճարտ.՝ Ռ. Իսրայելյան, քանդ.՝ Ա. Հարությունյան
Քաղաքի մուտք. Երևանի հյուսիսային մուտքը	1987 թ.	Սևանի խճ. սկզբնամասում, Ավան - Քանաքեռ ճամփաբաժանում	1.2/16	Տ	ճարտ.՝ Գ. Ղամբարյան

Ըստ ներկայացված ցանկի կառուցապատման ենթակա տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները բացակյում են:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

4.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

4.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում

- ցեմենտի փոշու արտանետումներ, տարածքում նախատեսվող բետոնահանգույցից

- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

4.3.1 *Մթնոլորտային օդ*

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել

- շինությունների ծածկում անթափանց թաղանթով, համապատասխան բարձրության

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում:

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.

- իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

4.3.2 *Ջրային ռեսուրսներ*

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
- Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ավտոցիստեռներով, պայմանագրային հիմունքներով:

4.3.3 *Հողային ռեսուրսներ*

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ N1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
    - Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
    - Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
    - Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:
    - Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով:
    - Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև 20 տարի:
    - Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:
